ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Իրանի Իսլամական Հանրապետություն, Թեհրան, 2023 թ. հունվարի 19-21-ը

4. Հրավիրող կողմը

ԻԻՀ նախագահի՝ կանանց և ընտանեկան հարցերով տեղակալ Էնսիե Խազալի

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Ազդեցիկ կանանց առաջին միջազգային համագումարին»

6. Քննարկված թեմաները

Համագումարի նպատակն էր համախմբել աշխարհի տարբեր անկյուններից ժամանած առաջնորդ կանանց՝ կնոջ և ընտանիքի դիրքի մասին տարբեր երկրների մտավոր և մշակութային հիմքերի վրա համակարծության, կնոջ դերակատարությանը համահունչ հարթակի ստեղծման, փորձի փոխանակման համար, ինչպես նաև ներկայացնել տարբեր երկրների ազդեցիկ կանանց, խրախուսել և բարձրացնել նրանց դերակատարությունը:

Միջոցառման ընթացքում կայացան երկկողմ և բազմակողմ հանդիպումներ միջազգային գործընկերների հետ. ուրվագծվեցին համագործակցության նոր ուղղություններ, համատեղ նախաձեռնություններ, որոնց իրականացումը կարող է նպաստել երկրների բնակչության, մասնավորապես՝ կանանց և ընտանիքների սոցիալական բերեկեցությանը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու Եվրոպայի, Մերձավոր, Միջին և Հեռավոր Արևելքի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների ղեկավարների կանայք, կին նախարարներ, գործիչներ, քաղաքականության, գիտության և մշակույթի ոլորտներում ազդեցիկ և նշանավոր կանայք, որոնք հանդես եկան ելույթներով և ներկայացրեցին իրենց երկրներում կանանց ազդեցության դերը և դրա մեծացմանն ուղղված միջոցառումները:

Համագումարին կայացան նաև ազդեցիկ կանանց մեծարման և միջազգային մրցանակի շնորհման արարողություններ, աշխատանքային խմբերի նիստեր:

Միջոցառման հաջորդ օրը՝ հունվարի 21-ին, այց է կազմակերպվել ԻԻՀ առողջապահության և բժշկական կրթության նախարարություն, որտեղ հանդիպել եմ ԻԻՀ առողջապահության և բժշկական կրթության նախարար Բահրամ Էյնոլլահիին:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են երկու երկրների առողջապահական համակարգերը, արձանագրվել են կողմերի միջև հաջողությամբ ընթացող համագործակցությունը, ինչպես նաև այն զարգացնելու անհրաժեշտությունը, ուրվագծվել են փոխգործակցության նոր ուղղություններ ու դրանց իրականացման մեխանիզմները:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԻԻՀ առողջապահության և բժշկական կրթության նախարարությունում կայացած հանդիպման ընթացքում Հայաստանի և Իրանի առողջապահության նախարարները համատեղ որոշում ընդունեցին ստեղծել աշխատանքային խումբ, որը կհամակարգի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առողջապահական և բժշկագիտական ուղղություններով տարվող աշխատանքները:

9. Առաջարկությունները

Ազդեցիկ կանանց առաջին միջազգային համաժողովի ընթացքում առաջարկվեց երկրորդ միջազգային համաժողովը հաջորդ տարի անցկացնել Հայաստանում: Առաջարկն ընդունվեց միաձայն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

25.01.2023 թ.